## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

14 մայիսի 2019 թվականի թիվ 50-Ա
ք. Երևան

### «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի մայիսի 2-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. մայիսի 14
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի մայիսի 14-ի թիվ 50-Ա որոշման

| **Հեռուստածրագրի անվանումը** | **Թույլտվության ժամկետի ավարտը** |
|---|---|
| «Կինոման»<br>«Ֆիլմ Zone»<br>«Հայ TV»<br>«Թավա TV»<br>«ԽաղԱլիք»<br>«ArmNews24»<br>«Բազմոց TV»<br>«Ֆիթնես TV»<br>«Մուզզոն»<br>«Ա-Թիվի» | անժամկետ |